Ո՞վ կարող է գրանցվել

Կարող են գրանցվել 18–32 տարեկան Հայ Ավետարանական երիտասարդները:

Դիմորդները պետք է լինեն իրենց եկեղեցիների երիտասարդական ծառայություններում ակտիվորեն ընդգրկված և իրենց հովիվների կողմից երաշխավորված անձինք:

Ինչպե՞ս գրանցվել

Դիմումի ձևը կարող եք ներբեռնել www.eca.am կայքէջից: Լրացված դիմումները պետք է ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝ aec175youthconf@eca.am հասցեին:

Ֆինանսական օգնության հնարավորությունից օգտվելու համար դիմել տեղական եկեղեցու հովվին:

Գրանցման և կանխավճարների վերջնաժամկետը 2022 թ.-ի մարտի 15-ն է:

Մանրամասնությունները տես դիմումի ձևի մեջ:

Հայ Ավետարանական եկեղեցին կազմավորվեց 1846 թ. հուլիսի 1-ին՝ Կ.Պոլսում և կոչվեց «Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի»:

Հայ Ավետարանական եկեղեցու 175 տարվա պատմությունը հաստատում է, որ այն քրիստոնեական հավատքի, աստվածային սիրո և աստվածապաշտության հավաքականություն է, որի առաքելությունն է.

- Նվիրվածությունն Աստծուն
- Նվիրվածությունը քրիստոնեությանը
- Նվիրվածությունը հայ ժողովրդին և Հայրենիքին:

Առաջնորդներն են՝ Հիսուս Քրիստոսը, Աստվածաշունչ մատյանը և հայոց հոգևոր անսպառ ժառանգությունը:

Հետադարձ կապ

aec175youthconf@eca.am

www.eca.am

+374 10 54 35 76

ՀԱՄԱԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆ
30.06 – 10.07
2022

Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք շրջապատած... համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը...

Եբրայեցիս 12.1

Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցու 175-ամյակի առթիվ

2022 թ.-ի ամռանը, Հայաստանում տեղի կունենա Հայ Ավետարանական երիտասարդների համագումար:

Բազում երիտասարդներ, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից, Միջին Արևելքից, Եվրասիայից և Ավստրալիայից, կմիանան Հայաստանի և Արցախի երիտասարդներին հայրենիքում և հնարավորություն կունենան լսելու Աստծո՝ մեզ վստահված առաքելության մասին և հետագայում դա գործնականում կիրառելու իրենց եկեղեցիներում:

Դու՛ կարող ես դրան մաս կազմել:

Համագումարի նպատակը

Հայ Ավետարանական Համաշխարհային Խորհուրդը ՀԱԵ 175-ամյակի առթիվ հետևյալ նպատակներն է հետապնդում.

- Հայրենիքում գոհաբանություն բարձրացնել առ Աստված ՀԱԵ 175 տարվա անգնահատելի գործունեության համար:
- Ամրապնդել աշխարհասփյուռ Ավետարանական երիտասարդների կապը հայրենիքի և միմյանց հետ:
- Վերահաստատել ՀԱԵ գոյության նպատակը:

Սովորելու և աճելու հնարավորություն

Սովորել Աստծո Խոսքն ու դրանից բխող մարտահրավերները՝ ուղղված հայ երիտասարդներին:

Գանք՝ պատրաստ լինելով լսելու, սովորելու և բացահայտելու, թե որն է Աստծո կամքը Ավետարանական Եկեղեցու համար՝ այսօր և ապագայում, և որպես երիտասարդներ՝ ինչպես մաս կազմենք այդ տեսիլքին:

Անխախտ պահենք մեր հույսի դավանանքը, առանց տատանվելու, որովհետև հավատարիմ է Խոստացողը:

Եբրայեցիս 10.23

Ծրագիրը

Ներառում է Համագումար Հանքավանում, հաղորդակցություն և ռազմավարության մշակում, այցելություն պատմական վայրեր, 175-ամյակին նվիրված Պաշտամունք և մշակութային միջոցառում:

Ընդհանուր ծրագիրը հետևյալն է՝

- **Հունիսի 29, 30**
  Ժամանում և տեղավորում հյուրանոցներում
- **Հուլիսի 1**
  Մշակութային միջոցառում Երևանում
- **Հուլիսի 2-5**
  Համագումար AMAA-ի Հանքավանի «Ծողիկ» ճամբարում
- **Հուլիսի 6-8**
  Շրջագայություն պատմական վայրերով
- **Հուլիսի 9**
  Ազատ օր
- **Հուլիսի 10**
  Մեկնում Հայաստանից